ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՌՈՒԲԵՆԻ

Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Է.00.02 - «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Պ.Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ.Գ. Թունյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Ղ. Մուրադյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հոկտեմբերի 19-ին, ժ. 14:00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 “Համաշխարհային պատմություն” մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2015 թ. սեպտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Կովկասյան տարածաշրջանի հանդեպ շահագրգռություններ ունեցող Ռուսաստանի կողմից այստեղ հաստատվելու գործընթացը սկսվում է XVI դարի II կեսից՝ Իվան Ահեղի ժամանակներից[1] և առավել ակտիվանում է XVIII դարում, երբ գործընթացը նպատակաուղղված էր պարսից տիրապետությունից ռուսական ազդեցության ոլորտի մեջ վրացի, հայ և արևելակովկասյան թաթար ժողովուրդներին ներառելուն, ինչպես նաև թուրքական ծավալապաշտությունը կանխելուն: XVIII դարում Ռուսաստանը ձգտում էր Այսրկովկասում տարածել իր ազդեցությունը՝ «պետականություն ունեցող ժողովուրդներին պայմանագրերի միջոցով խոստում էր տրվում պահպանելու, իսկ չունեցող ժողովուրդներին՝ վերականգնելու պետականությունը»[2], իսկ վրացական պետության բռնակցումից հետո Ռուսաստանն անմիջական սահմանակից է դառնում Օսմանյան Թուրքիայի և շահական Իրանի հետ[3]: Այսրկովկասյան տարածաշրջանին տիրելու հերթական շրջափուլը սկսվում է XIX դարի սկզբից, որի հիմնական բովանդակությունը 1804-1813թթ. ռուս-իրանական, 1806-1812թթ. ռուս-թուրքական և 1817-1864թթ. Կովկասյան պատերազմն էր, որի ընթացքում տեղի ունեցան նաև 1826-1828թթ. ռուս-իրանական և 1828-1829թթ. ռուս-թուրքական երկրորդ պատերազմները: Սրանց արդյունքն էր՝ 1801-1810թթ. Վրաստանի, 1803-1813թթ. Արևելյան Կովկասի (ներկայիս Ադրբեջանի) և 1805-1828թթ. Արևելյան Հայաստանի «կամավոր միացումը»[4] կամ, այլ կերպ ասած, փաստացի բռնակցումը Ռուսաստանին:

XVIII դարի վերջերից կովկասյան տարածաշրջանում, Օսմանյան Թուրքիայում և Իրանում սկսում են ակտիվանալ նաև Անգլիայի և Ֆրանսիայի հետաքրքրությունները[5]:

---

[1] История России с древнейших времён до наших дней, Под ред. Сидорова А.В., Москва, 2007, с. 101-102; История России с древнейших времён до начала XXIв., Под ред. член-корр. РАН А.Н. Сахарова, Москва, 2003, т. I, с. 375.

[2] Չոբանյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Խմբագիրներ Վ.Բ. Բարխուդարյան, Պ.Մ. Մուրադյան, Սուրբ Էջմիածին - 2006, (560 էջ), էջ 12; Полное собраніе законовъ Россійской имперіи (այսուհետև՝ ПСЗРИ), Собраніе первое, с 1649 по 12 декабря 1825 года, С.Петербургъ, 1830, томъ XXVI, 1800-1801, док. 19.721, с. 502-505; նաև՝ Авалов З.Д., Присоединение Грузии к России, Москва, 2011, с. 1-288.

[3] Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 139-156:

[4] Стрельцов А.Ф., “Кавказ в отечвственной военной истории”. “Безопасность России: в прошлом, настоящем и будушем”. “Военно-исторический журнал”, Москва, 2003, □3, с. 43-45; Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարան» (այսուհետև՝ Մատենադարան), Արխիվ Լազարյանների, թղթ. 11, գործ 79, վավ. 1, ռուսերեն ձեռագրի պատճեն, 4 էջ; Акты собранные Кавказскою Археографическою Коммисіею (այսուհետև՝ АКАК), Изданъ подъ ред. председателя коммисіи Ад. Берже, Тифлисъ, 1868, томъ II, док. 5, с. 8.

[5] Բայբուրդյան Վահան, Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 408-410; История Ирана. Состли С.А. Шумов, А. Андреев, Киев-Москва, 2003, с. 58-61; ПСЗРИ, Собрание первое, с 1649 по 12

Տևական ժամանակի ընթացքում Ռուսական կայսրությունը հայ ժողովրդի նկատմամբ վարել է ռուսականացման, հետապնդումների և ազգահալած գաղութային քաղաքականություն:

Խորհրդային կարգերի հաստատումով, սակայն, պատմության գիրկը չանցան ռուսական նախկին կայսրության մեջ ապրող տարբեր ժողովուրդների միջև եղած ազգային, տարածքային, կրոնական և այլ հակամարտությունները:

ԽՍՀՄ փլուզման գործընթացում անկախացած Հայաստանի և Արցախի հանրապետությունների գոյությունն ու հետագա ճակատագիրը, կովկասյան տարածաշրջանի հանդեպ ներկայիս Թուրքիայի, Իրանի, Արևմուտքի և Ռուսաստանի՝ երբեք չթուլացող մրցակցությունն ու շահերի բախումը, միջազգային տարաբնույթ կազմակերպությունների գործունեության ակտիվացումը և ժամանակակից համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացի մարտահրավերները մեծացնում են հետաքրքրությունն ազգային, էթնիկ մշակույթների և պատմության հանդեպ:

Հետխորհրդային նորանկախ պետությունների գոյակցության, ինչպես նաև, ՀԱՊԿ և ԵՏՄ իրողության խորապատկերի վրա, Արևմուտք-Ռուսաստան միջազգային հարաբերությունների բազմաբարդ խաչուղիներում հայ ժողովրդի շահերը հաշվի առնելու և ստուգապես կողմնորոշվելու անհրաժեշտության ու հայկական պետության առջև ծառացած առաջնահերթություններին ներկայում և ապագայում արդյունավետ լուծում տալու հանգամանքները հրատապ ու արդիական են դարձնում անցյալի հայ-ռուսական մշակութային, տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունների պատմության տարաբնույթ հարցերի իրատեսական, անաչառ և համակողմանի խորքային հետազոտության ու վերաիմաստավորման անհրաժեշտությունը[6], որն ունի գիտական արժեք ու քաղաքական հնչեղություն:

Այս առումով՝ XIX դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբերությունների և Ռուսաստանի կայսրության վարած գաղութային քաղաքականության համատեքստում կարևորվում է դրանցում ռուս տաղանդավոր գրող և ռուսական իրապաշտական (ռեալիստական) թատերգության հիմնադիրներից մեկի՝ Ա. Գրիբոյեդովի գործունեության և հայ ժողովրդի՝ խնդրո առարկա ժամա-

---

декабря 1825 года, Санкт Петербургъ, 1830, томъ XXXII, 1812-1815, док. 25.466, с. 642-643; Внешняя политика России XIX и начала XX века (այսուհետև՝ ВПР), Документы российского министерства иностранных дел, Серия вторая, 1815-1830гг., Москва, 1974, т. первый (девятый) ноябрь 1815г - сентябрь 1817г, док. 37, с. 122-126; АКАК, 1875, h. VI, մաս II, փաստ. 408, էջ 221-223; փաստ. 262, էջ 119-120; փաստ. 267, էջ 122-127; փաստ. 341, էջ 177-178; փաստ. 342-345, էջ 178-182; փաստ. 351, էջ 183-184; Иоаннисян А.Р., “Борьба Англии и Франции против присоединения Армении к России”, Известия АН Арм. ССР, Общественные науки, Ереван, 1953, □3, с. 50-51; 55-59; A. General Sketch of the History of Persia. By Clements R. Markham, C.B.F.R.S. London, Longmans, Green, And CO. 1874, p. 532-536; Afschar, Mahmoud, La politique europèenne en Perse: quelques pages de L’histoire diplomatique, Librairie orientale “Iran schahr”, Berlin, 1921, p. 9-10.

[6] “Armyanstvo. Deportation of Armenians from the Caucasus” http://karabakh-doc.azerall.info/; www.azeri genocide.org/hist/hist07.htm; Бабаян Давид: “Арцахская проблема и идеология пантюркизма”, http://rus-arm.org/NagorniyKarabakh/Page4.html (Часть 2), 22.12.2011; Тарасов Станислав: “Вашингтон, Анкара, Ереван и Тбилиси готовят политический саммит”, http://rus-arm.org/NagorniyKarabakh/Page4.html, 13.12.2011; Тарасов Станислав: “Москва и Тегеран могут пойти на признание независимости Карабаха”, http://rus-arm.livejournal.com/, 01.07.2012.

նակահատվածի պատմության մեջ նրա տեղի ու դերի անաչառ վերաարժևորման խնդիրը: 1818-1829թթ. Իրանում դիվանագիտական, ապա կովկասյան տարածաշրջանում շտաբային ծառայության, հետագայում էլ, Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո, դարձյալ Իրանում նախարար-դեսպան եղած ժամանակաշրջանում, Ա. Գրիբոյեդովը որոշակիորեն առնչվել է այդ պատմափուլի հայ-ռուսական և ռուս-իրանական հարաբերություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է XIX դարի առաջին երեսնամյակի՝ նաև Ռուսաստանի գաղութային քաղաքականության տեսանկյունից դիտարկել ու բազմակողմանի քննության ենթարկել հանիրավի կերպով գրական-մշակութային ոլորտից գերազանցապես այլ հարթություններում ներկայացված և արհեստականորեն բացարձականացված ռուս գրող Ա. Գրիբոյեդովի գործունեությունն Այսրկովկասում և Իրանում, որի իրականացման համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ռուսաստանի XIX դարի սկզբի արտաքին քաղաքականության համատեքստում լուսաբանել Ա. Երմոլովի ազդեցության տակ Ա. Գրիբոյեդովի վարած դիվանագիտական գործունեությունը, ինչպես նաև հստակորեն ձևավորվող նրա աշխարհայացքն ու դիրքորոշումը:
- Վերլուծել և վերագնահատել Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի հետ Ա. Գրիբոյեդովի փոխհարաբերությունների և Կարազիադինից-Թուրքմենչայ վերջինիս գործունեության հանգամանքների հետ առնչվող հարցերը:
- Տարաբնույթ վկայությունների և փաստաթղթերի համադրական վերլուծությամբ վերաիմաստավորել Ա. Գրիբոյեդովին Իրանում դեսպան նշանակելու հետ կապված հարցերի շուրջ ցայսօր գերիշխող տեսակետները:
- Հանգամանորեն վերլուծելով իրանահայերի ներգաղթի հետ կապված ռուսական իշխանությունների և հայ գործիչների ներդրած ջանքերը՝ վերագնահատել Ա. Գրիբոյեդովի առնչություններն այդ գործին և նրա վերաբերմունքը ներգաղթն իրականացրած հայ գործիչների նկատմամբ:
- Նորովի վերլուծել “Проект учреждения Российской Закавказской компании” («Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ» - Վ.Ս.) փաստաթղթի ստեղծման, էության, մերժման պատճառների, ճորտատիրության և ապրանքադրամական հարաբերությունների հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերը:
- Վերաարժևորել Իրանում ռուսական դիվանագիտական առաքելության ձախողման հանգամանքների շուրջ ստեղծված տեսակետները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման իր բովանդակությամբ և կառուցվածքով հայ պատմագիտության մեջ առաջին համապարփակ հետազոտությունն է, որում փորձ է արվում Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի հակասական դրսևորումները, դիվանագիտական գործունեությունն ու տնտեսագիտական հետաքրքրություններն ուսումնասիրել բազմակողմանիորեն և փոխկապակցված ամբողջության մեջ:

Տարաբնույթ (նաև՝ չհրապարակված) արխիվային նյութերի[7], սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների համադրական վերլուծության հիման վրա ատենախոսության մեջ առաջին անգամ բազմակողմանի և նորովի լուսաբանվել են հայ-ռուսական հարաբերությունների, գրող, մշակութային գործիչ և դիվանագետ Ա. Գրիբոյեդովի զգացմունքային, երբեմն հակասական բնավորությամբ և աշխարհայացքային դրսևորումներով ուղեկցվող դիվանագիտական ծառայության հանդեպ նրա վերաբերմունքի, Ա. Երմոլովի ազդեցության տակ կառավարական հրահանգներից շեղվելու, դիվանագիտական ծառայության վաղ փուլում Իրանից հեռանալու դրդապատճառների հարցերը:

Կապված գրողի աշխարհայացքի ձևավորման խնդիրների հետ՝ համառոտ անդրադարձ է կատարվել «Խելքից պատուհաս» պիեսի և մյուս մտահղացումների արարման վրա դեկաբրիստական գաղափարների ազդեցության չափի խնդիրներին: Առաջ է քաշվել «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը ոչ միայն պատմաքաղաքական, այլև իրավաբանական և տնտեսագիտական վերլուծության ենթարկելու անհրաժեշտության հարցը և փորձ է արվել «Նախագիծ»-ը դիտարկել հիշյալ տեսանկյուններից: Նոր մոտեցումներ են ցուցաբերվել Թուրքմենչայի պայմանագրում հայանպաստ հոդվածների ներառումը բացառապես Ա. Գրիբոյեդովին վերագրելու, ինչպես նաև հայ և ընդհանրապես կովկասյան ժողովուրդների բարեկամ և նրանց ցավերին վշտակից լինելու վերաբերյալ առկա տեսակետներին ու խնդիրներին:

Վեր են հանվել իրանահայ ներգաղթյալների շահերը՝ մահմեդական ցեղերին հանգստության մեջ պահելու խնդիրներին ստորադասելու շրջանցված փաստերը: Թեհրանում ռուսական դեսպանական առաքելության տապալումն առաջին անգամ դիտարկվել է ռուսական և իրանական պաշտոնական տեսակետների ու փրկվածների, նաև քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրների՝ այլ ականատեսների վկայությունների հետ համեմատության և հայտնի առանձին պատճառների հավաքական ամբողջության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունն ընդգրկում է բազմիցս հետազոտված այն ուշագրավ ժամանակաշրջանը, որի ընթացքում հայ ժողովուրդն իր հայրենիքում առնչվել է ռուսական կայսրապետական քաղաքականության և այն իրականացնողների հետ: Թեև Այսրկովկասում և Իրանում Ա. Գրիբոյեդովի գործունեությունն ընդմիջումներով ընդգրկում է 1818-1829թթ. ընկած ժամանակաշրջանը, սակայն, մեր առջև դրված խնդիրներին հիմնովին և համընդգրկուն մոտեցում ցուցաբերելու նպատակով, հարկ ենք համարել իրականացնել XIXդ. սկզբի պատմական զարգացումների

[7] Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթ. 106, գործ 14, վավ. 58; 121; թղթ. 107, գործ 44, վավ. 370; թղթ. 111, գործ 36(32), վավ. 37; 64; գործ 79, վավ. 7; Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164, վավ. 1319; թղթ. 166, վավ. 1061; 1082;1083;1084;1086; թղթ.167ա, վավ. 114; Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Արխիվ Լազարյանների, ֆոնդ 42, ցուց. 1, գործ 17, թերթ 3:

համառոտ քննությունը, քանի որ այդ զարգացումների հետագա մասնակիցներից մեկն է եղել Ա. Գրիբոյեդովը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են Արևելքում և մասնավորապես Այսրկովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեության հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության, պատմաքննական և պատմահամեմատական մեթոդների զուգորդման և անաչառության սկզբունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել XIX դարի առաջին կեսի ռուսական դիվանագիտության և տնտեսական քաղաքականության պատմության վերաբերյալ հատուկ դասընթացի մշակման նպատակով, իսկ օգտագործված արխիվային և փաստագրական տարատեսակ նյութերը կարող են օգտակար լինել քննված ժամանակաշրջանում հայ եկեղեցական-ազգային գործիչներին, ռուսական իշխանությունների գործունեությանը և տնտեսագիտական հարցերին վերաբերող դասախոսությունների և զանազան խնդիրների ուսումնասիրության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այսրկովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեությանը վերաբերող պատմագիտական ուսումնասիրությունների ընթացքը կարելի է բաժանել երեք՝ մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային փուլերի:

Մինչխորհրդային փուլը կարելի է բաժանել երկու ենթափուլերի. XIXդ. 30-80-ական թվականներ՝ պատմագիտական նյութերի կուտակման փուլ, XIXդ. 80-ական թթ. - XXդ. երկրորդ տասնամյակ՝ պատմագիտական արժեք ներկայացնող առաջին՝ հուշագրական, գրաքննադատական գրականության և Ա. Գրիբոյեդովի նամականու հրապարակումների փուլ: Խորհրդային փուլում՝ XXդ. 20-ական թթ. - XXդ. 80-ական թթ. վերջերը, ստեղծվում են գիտական լուրջ արժեք ներկայացնող ուսումնասիրություններ: Գաղափարական կապանքներից ու կաղապարներից ձերբազատվելու փորձերի հետխորհրդային փուլը սկսվում է 1990-ական թվականներից:

1830-1880-ական թվականներին հրապարակվում են Այսրկովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեությանը վերաբերող աղբյուրներ, որոնցից էին Ա. Գրիբոյեդովի ձեռքով գրված նամակներն ու փաստաթղթերը, ժամանակակիցների հուշերը և պետական-պաշտոնական այլ փաստաթղթեր: Աղբյուրներն օգտագործելիս հաշվի ենք առել դրանց հավաստիության աստիճանը՝ նախապատվություն տալով այն տեղեկություններին, որոնք հաստատվում են այլ աղբյուրների հետ համեմատական քննությամբ:

1859թ. Ա. Գրիբոյեդովի մասին իր նյութերն է հրապարակում նրա ազգական

Դ. Սմիռնովը[8]: 1860 և 1863թթ. հրապարակվում են 1812թ. հերոս պարտիզան Դ. Դավիդովի հուշերը[9], որոնցում, հաճախ կողմնակալ կերպով, քննադատվում է Ի. Պասկևիչի Կովկաս ժամանելուց հետո Ա. Գրիբոյեդովի պահվածքն Ա. Երմոլովի հանդեպ և գործունեությունն Իրանում որպես դեսպան: Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի վերաբերյալ ռուսական պաշտոնական տեսակետը լրացնող հոդված է հրապարակում 1833-1838թթ. Իրանում ռուսական դեսպան Ս. Սիմոնիչը[10]: Պ. Եֆրեմովը[11] կարևորում է Ա. Գրիբոյեդովի վախճանին վերաբերող՝ 1830թ. հրապարակված “Реляция”-ի («Ռազմազեկույց» - Վ.Ս.)[12] տեղեկությունները՝ դրանք համեմատելով Ա. Գրիբոյեդովի գլխավորած դեսպանակազմի փրկված անդամ, առաջին քարտուղար Ի. Մալցովի վկայությունների հետ: Ա. Գրիբոյեդովի ողբերգական մահվանը վերաբերող առաջին հայկական աղբյուրը՝ Թեհրանից Ներսես Աշտարակեցուն ուղղված անանուն մի նամակ, 1872թ. Հրապարակում է Ալ. Երիցյանը[13]:

Իրանում և Կովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեության վերաբերյալ խիստ արժեքավոր հրապարակումներով հանդես է գալիս Ադոլֆ Բերժեն[14]՝ հիմնականում կրկնելով ռուսական իշխանությունների պաշտոնական տեսակետները: Ա. Բերժեի՝ 1866 թվականից հրապարակվող Կովկասի կառավարչության փաստաթղթերի հայտնի բազմահատոր ժողովածուի մեջ առանձին փաստաթղթեր վերաբերում են Ա. Գրիբոյեդովին[15]: 1875թ. Ն. Շիմանովսկին, վկայակոչելով բազմաթիվ ականատեսների, նյութեր է հրապարակում դեկաբրիստների հետ կապերի կասկածանքով Կովկասում Ա. Գրիբոյեդովի ձերբակալության և փաստաթղթերը

---

[8] Нечкина М., Грибоедов и декабристы, Изд-е третье, “Художественная литература”, Москва, 1977, с. 9-10; 632 (ծանոթություններ).

[9] Նույն տեղում՝ էջ 632, □ 9 ծանոթություն; տես նաև՝ Давыдов Денис, “Из воспоминаний о 1826 годе”, в книге “Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников, Ленинград, 1929, с. 101-107; նաև՝ Դավիդով Դենիս, Ռազմական հուշեր, Երևան, 1942, էջ 521-530:

[10] Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 202-206 (այն 1867թ. տպագրվել է “Москва” թերթի □145-ում՝ “Смерть Грибоедова” վերնագրով):

[11] Ефремов П.А., “О смерти А.С. Грибоедова”, “Русский архивъ”, Москва, 1872, Годъ десятый, с. 1491-1538.

[12] Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., (“Реляция происшествий предваривших и сопровождавших убиение членов последнего российского посольства в Персии”), էջ 151-184:

[13] Ерицов А.Д., “О причинахъ убийства Грибоедова”, “Кавказская старина”, Под ред. А.Д. Ерицова, Тифлисъ, 1872, Годъ I, ноябрь, □1-й, с. 28.

[14] Берже Ад.П., “Смерть А.С. Грибоедова”, “Русская старина”, СПб., 1872, □8, с. 163-207; նույնի՝ “Александръ Сергеевичъ Гридоедовъ въ Персіи и на Кавказе (1818-1828)”, նույն տեղում՝ 1874, Т. XI, с. 276-302; նույնի՝ “Александръ Сергеевичъ Гридоедовъ. Деятельность его как дипломата, 1827-1829”, նույն տեղում՝ 1874, Томъ XI, с. 517-534; 746-765; նույնի՝ “Хосров Мирза, 1813-1875”, նույն տեղում՝ 1879 годъ, с. 333-352.

[15] АКАК, Тифлисъ, 1875, томъ VI, часть II, док. □267, էջ 122-127; □403, էջ 219; □465, էջ 253; □471, էջ 255-256; □492, էջ 267-268; □498, էջ 270; 1878, томъ VII, док. □501, էջ 539; □516, էջ 553-560; □533, էջ 579; □536, էջ 582; □551, էջ 594-595; □566, էջ 607; □591, էջ 622-624; □617, էջ 642; □618, էջ 642-644; □619, էջ 644-645; □621, էջ 645-646; □623, էջ 647-649; □633, էջ 657-658; □652, էջ 672-673; □653, էջ 673; □654, էջ 675; □661, էջ 679-681; □672, էջ 688-689; □673, էջ 689-690; □677, էջ 692; □688, էջ 698-699; □694, էջ 702; □698, էջ 704-706; □700, էջ 707-708.

ոչնչացնելու մասին[16]: Իրանում Ի. Սիմոնիչի գլխավորած ռուսական նոր դեսպանության քարտուղար Կ. Բոդեն հուշեր է տպագրում Ա. Գրիբոյեդովի վախճանի մասին[17], որոնք, իրենց միակողմանի մոտեցումներով, տարբերվում են Ի. Սիմոնիչի և Ի. Մալցովի վկայությունների հիման վրա ձևավորված ռուսական պաշտոնական կողմնակալ տեսակետներից և որոնք հետագայում լայնորեն շրջանառվում են խորհրդային հետազոտողների կողմից:

1880-ական թվականներից մինչև XX դարի երկրորդ տասնամյակի հրապարակումներից կարևոր են Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական ծառայությանն առնչվող, երբեմն միակողմանի գնահատականներով ուղեկցվող Ն. Մուրավյով-Կարսկու հուշերը[18], որոնցում քննադատվում է Ա. Գրիբոյեդովի հակասական բնավորությունը:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանը և մահվան հանգամանքներին է անդրադառնում ռազմական պատմաբան Վ. Պոտտոն[19], ում մոտեցումները դրանց բացահայտման խնդրում ունեն լրացուցիչ, օժանդակ նշանակություն: Կովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեության մասին, առանձին դեպքերում, հակասական տեղեկություններ կան նաև Ի. Պասկևիչի կենսագիր իշխան Շչերբատովի բազմահատորյակում[20]: Ա. Գրիբոյեդովի դեսպանակազմի վախճանի վերաբերյալ հայկական կարևոր աղբյուրներ է հրապարակում Գ. Շերմազանյանը[21], ում տեղեկությունները, ի տարբերություն կողմնակալ իրանական և ռուսական տեսակետների, հավաքված են անմիջական և այդ ժամանակ դեռ կենդանի ականատես հայերից: Ա. Գրիբոյեդովի ու Պ. Զավիլեյսկու կազմած «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» վերաբերյալ Ի. Պասկևիչին ուղղված «Գրությունը» և Ի. Բուրցով - Մ. Ժուկովսկու մեկնաբանություններով խիստ արժեքավոր տեքստերը 1891թ. առաջին անգամ հրապարակում է Ա.

---

[16] Шимановский Н.В., “Арест Грибоедова в 1825 году. Из воспоминаний”, “Русский архивъ”, Москва, 1875, □7, с. 339-344.

[17] Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 207-211 (այս հուշերն առաջին անգամ տպվել է “Живописное Обозрение” պարբերականում՝ “Смерть Грибоедова” վերնագրով):

[18] “Записки Н.Н. Муравьёва (Тифлисъ, октябрь 1818)”, (Баку-Тифлисъ), “Русский архивъ”, Изд-ій Петромъ Бар-теневымъ, Москва, 1886, кн. третья, с. 331-0335; նույնի՝ “Записки Николая Николаевича Муравьёва-Карскаго (декабрь 1821 - май 1822)” (Баку-Тифлисъ), նույն տեղում՝ 1888, □5, с. 97-0122; 313-0352; նույնի՝ “Записки Н.Н. Муравьёва-Карскаго. Взятие Тавриза, 1827”, նույն տեղում՝ 1891, □10, с. 177-228.

[19] Потто В., Кавказская война в отдельных очеркахъ, эпизодахъ, легендахъ и биографіяхъ, томъ III, Персидская война 1826-1828гг., Выпуск IV, Изд-е второе, С.Петербургъ, 1888, (“Посольство и смерть Грибоедова. Грибоедов полномочный министр при персидском дворе”), гл. XXXV, с. 603-632.

[20] Щербатов, генерал-лейтенант князь, Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, т. третий, Октябрь 1827 - май 1831гг., С.Петербург, 1891 (Ա. Գրիբոյեդովին վերաբերող էջերը տես ատենախոսության համապատասխան ծանոթություններում).

[21] Շերմազանեան Գալուստ, Նիւթեր ազգային պատմութեան համար, Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով (Դոնի վերայ), 1890 = ՌՅԼԹ, գլ. Թ, էջ 82-103: Հետագայում Մ. Ալավերդյանցը տպագրում է Գ Շերմազանյանի հրապարակումը՝ “Кончина А.С. Грибоедова (по армянским источникамъ)”, С.Петербург, 1901, 27 էջ ռուսերեն տարբերակը:

Մալշինսկին[22]: 1895թ. ոմն Հ.Ա. Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ հրապարակում է նրա դեսպանակազմի փրկված անձանցից հայազգի սուրհանդակ Համբարձումի՝ ականատեսի լավատեղյակությամբ ներկայացված հույժ կարևոր հուշերը[23], որոնք պատշաճ ուշադրության չեն արժանացել:

1910թ. Վ. Պոտտոն հրապարակում է Ա. Գրիբոյեդովի՝ 1827-1829թթ. դիվանագիտական գործունեությանն առնչվող փաստաթղթերը[24]: Մինչխորհրդային հրապարակումների փուլը կարելի է ավարտել գրականագետ Ն. Պիկսանովի հրապարակումներով[25]: Նա առաջին անգամ գիտական վերլուծության է ենթարկել Ա. Գրիբոյեդով-դեկաբրիստներ փոխհարաբերությունների և ճորտատիրական կարգերի հանդեպ նրա վերաբերմունքի հարցերը և, արդեն խորհրդային փուլում, որոշ հարցերում ընկնելով ծայրահեղությունների մեջ՝ Ա. Գրիբոյեդովին համարում է ճորտատիրական կարգերի կողմնակից[26]: Ա. Գրիբոյեդովի մահվան 100-ամյակի առիթով հրապարակվում են նրա ժամանակակիցների հուշերի մի շարք ժողովածուներ[27]:

1929 թվականից գիտական աշխատություններով հանդես է գալիս Ի. Ենիկոլոպովը[28], ով վրացական արխիվներից հայտնաբերում և հրապարակում է բազմաթիվ արժեքավոր աղբյուրներ: Նա, միևնույն ժամանակ, ելնելով ժամանակի հրամայականից հանդիսանում է Ա. Գրիբոյեդովի գործունեությունը գերագնահատող և քաղաքականացնող հեղինակ:

Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրությունների վերաբերյալ

---

[22] Мальшинский А.П., “Неизданная записка А.С. Грибоедова”, “Русскій вестникъ”, С.Петербургъ, 1891, т. двести шестнадцатый, сентябрь, с. 1-17. Մինչ այդ, «Նախագծի» ներածությունը տպագրվել է 1831թ.՝ “Тифлисские ведомости” թերթում:

[23] Հ.Ա., «Գրիբոյեդովի սպանությունը (նրա 100-ամեայ տարեդարձի առթիվ)», «Մշակ», Թիֆլիս, 1895, □2 հունվարի 5; □3 հունվարի 6:

[24] Материалы къ исторіи персидской войны, 1826-1828гг. (продолжение, 1826-ой годъ), “Кавказский сборникъ”, Тифлисъ, 1910, томъ XXX, с. 1-214 (այսուհետև՝ Материалы...).

[25] Пиксанов Н., “К характеристике Грибоедова. Поэт и ссыльные декабристы”, газ. “Русские ведомости”, 1911, 15-ое ноября; նույնի՝ “Грибоедов А.С.”, Полное собрание сочинений, Сборник научных документов, Из ряда изъящной словесности Императорской Академии наук, т.-первый, С.Петербург, 1911, 328 с.; նույնի՝ “Душевная драма Грибоедова”, “Современник”, СПб., 1912, кн. XI, с. 224-243:

[26] “Грибоедов и старое барство”. По неизданным материалам составил Н.К. Пиксанов, Москва, 1926, 77 с.; նույնի՝ “Творческая история “Горя от ума”, М.-Л., 1928, 362 с., նույնը՝ Москва, 1971, 400 с.; նույնի՝ “Грибоедов. Исследования и характеристики”, Ленинград, 1934, 335 с.

[27] “А.С. Грибоедов в воспоминаниях современников”, Под ред. Пиксанова Н.К., М., 1929, 342 с. (մենք օգտվել ենք Վ. Վացուրոյի խմբագրությամբ հետագայում լույս տեսած երկրորդ հրատարակությունից (“Худож. литература”, Москва, 1980, 448 с.); “Грибоедов. Его жизнь и гибель...”, նշվ. ժող. (351 էջ):

[28] Ениколопов И.К., Грибоедов в Грузии и Персии, Историко-биографический очерк, Тифлис, MCMXXIX (1929), 209 с.; նույնի՝ “А.С. Грибоедов в Грузии”, При участии М. Заверина, Тбилиси, 1954, 160 с.; նույնի՝ “Грибоедов и Восток”, Ереван, 1974, 158 с.; նույնի՝ “Из истории русско-иранских отношений и дипломатической деятельности А.С. Грибоедова”, ИФЖ, 1962, 4(19), с. 143-151.

բավականին արժեքավոր հրապարակում է ներկայացնում Ն. Կալմը[29]: 1920-ական թվականներից ձևավորվող խորհրդային պատմագիտությունը, ելնելով պատմական ժամանակաշրջանի հրամայականից և դասակարգային պայքարի մարքս-լենինյան տեսության դիրքերից, հատկապես 1940-ական թթ. երկրորդ կեսից, սկսում է քաղաքականացնել գրող Ա. Գրիբոյեդովի կյանքը, գերագնահատել նրա գործունեությունն ու բացարձականացնել նրա անձը:

Այսպես՝ Ա. Գրիբոյեդովին որպես վրաց ժողովրդի մեծագույն բարեկամ և Կովկաս աքսորված դեկաբրիստների հոգատար գաղափարակից[30] է ներկայացնում Վ. Շադուրին:

Հայաստանի արխիվներում պահպանվող՝ հայ-ռուսական հարաբերություններին և Ա. Գրիբոյեդովին վերաբերող նյութերի հրապարակման և վերջինիս անձի գերագնահատման գործում զգալի է Վ. Պարսամյանի[31] դերը:

Ա. Գրիբոյեդովի մասնակցությունը Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործին գերագնահատված է նաև Վ. Պաշուտոյի կողմից[32]: Նա առաջիններից է, ով դեսպան Գրիբոյեդովի սպանության մեղավորների մեջ նշում է շահական կառավարությանը և անգլիացիներին:

Ա. Գրիբոյեդով-դեկաբրիստներ հարաբերությունների շուրջ խորհրդային պատմագիտության առաջին փուլի տեսակետների (ի հեճուկս Ն. Պիկսանովի) վերաարժևորման գործում շրջադարձային է հանդիսանում Մ. Նեչկինայի մենագրությունը[33], որում Ա. Գրիբոյեդովը ներկայացվում է որպես հեղափոխական դեկաբրիստ, նրանց գաղափարախոս և նույնիսկ մարդ, ով իր գաղափարներով առաջ էր անցել նրանցից: Մ. Նեչկինայի տեսակետները հետագայում դառնում են գերիշխող:

1951թ. Օ. Մարկովայի հրապարակումից[34] հետո միանշանակ դրական լույսի տակ է սկսում դիտարկվել «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը, և այն ներկայացվում է որպես բացառապես Ա. Գրիբոյեդովի «տնտեսագիտական առաջադիմական մտքերի փայլուն դրսևորում»:

1953թ. Գ. Պետրովը հրապարակում է 1829թ. հունվարին Թեհրանում ռուսական դեսպանատանը զոհված Սողոմոն Մելիքյանի եղբորորդու հուշերն այդ ողբեր-

---

[29] Кальм Н., “Коммерческие замыслы Грибоедова”, “Литературное наследство”, Москва, 1935, 19/21, с. 143-176.

[30] Шадури В., Грибоедов и грузинская культура, Тбилиси, 1946, 77 с.; 1945թ. առանձին գրքույկով լույս են տեսնում նաև՝ Ա. Գրիբոյեդովի «Ճանապարհորդական նոթեր. Կովկաս-Պարսկաստան», Երևան, 1945, 93 էջ, հուշերը:

[31] Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, 280 էջ; նույնի՝ “А.С. Грибоедов и переселение армян”, в книге “Из истории вековой дружбы”, Инст-т Истории, Ереван, 1983, с. 136-146.

[32] Пашуто В.Т., “Дипломатическая деятельность А.С. Грибоедова”, “Исторические записки”, М., 1947, т. 24, с. 111-159.

[33] Нечкина М.В., Грибоедов и декабристы, Москва, 1947, 1-ое изд-е, 597 с.; Москва, 1951, 2-ое изд-е, 537 с.; Москва, 1977, 3-е изд-е (Нечкина М.), 735 с.; նույնի՝ “Следственное дело А.С. Грибоедова”, Москва, 1982, 104с.

[34] Маркова О.П., “Новые материалы о проекте Российской Закавказской компании А.С. Грибоедова и П.Д. Завилейского”, “Исторический архив”, М.-Л., 1951, т. VI, с. 324-391.

գության վերաբերյալ[35], որոնց արժանահավատությունը, որոշ հարցերում, քննություն չի բռնում այլ աղբյուրների հետ համեմատելիս:

Իրանական ժամանակակից մամուլից քաղած նյութերի հիման վրա, Ա. Գրիբոյեդովի սպանության վերաբերյալ մեկ այլ աղբյուր է հրապարակում Չ. Բայբուրդին[36], ով ներկայացնում է նաև կատարվածի շուրջ իրանական պատմագրության կողմնակալ տեսակետները:

Թուրքմենչայի պայմանագրի կնքման և դրանում նաև հայանպաստ հոդվածներն ընդգրկելու գործում Ա. Գրիբոյեդովի «բացառիկ» դերակատարությունն է մատնանշում հետազոտող Լ. Սեմյոնովը[37]:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն առնչվող հսկայական արխիվային նյութերի ներկայացմամբ աչքի են ընկնում Ս. Շոստակովիչի[38] և Օ. Պոպովայի[39] հրապարակումները, որոնցում նույնպես շարունակվում է Ա. Գրիբոյեդովի գործունեության գերագնահատման և քաղաքականացման գործընթացը: Մասնավորապես՝ Ս. Շոստակովիչը, ռուսական դեսպանակազմի ձախողման հարցում, շեշտը դնում է անգլիական գործոնի գերակայության վրա:

Ռուս-իրանական հարաբերությունների և Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ իրանական պատմագրության տեսակետների սուր քննադատությամբ 1960-ական թվականներից հանդես է գալիս Բ. Բալայանը[40], ով Ա.Ս. Գրիբոյեդովի նահատակության գործում ևս առաջնային է համարում քաղաքական դրդապատճառները, անգլիական ու թուրքական գործոնները:

Ա. Գրիբոյեդովի նահատակության վերաբերյալ իրանական պատմագրության կողմնակալ տեսակետների հիմնավորված քննադատությամբ հանդես է գալիս Դ. Կոմիսարովը[41], ով, արդարացնելով գրողին, դարձյալ նախապատվություն է տալիս կատարվածի քաղաքական դրդապատճառներին: 1970-ական թվականներին

---

[35] Петров Г.М., “Новые материалы об убийстве А.С. Грибоедова”, Учёные записки Института Востоковедения, Иранский сборник, Москва, 1953, том VIII, с. 146-165.

[36] Байбурди Ч., “Новое о гибели А.С. Грибоедова (По данным иранской печати)”, “Русская литература”, ИЛЖ, Ленинград, 1959, □4, с. 171-173.

[37] Семёнов Л.С., “К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении”, ИФЖ, Ереван, 1959, □4, с. 105-122.

[38] Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, Москва, 1960, 296 с.

[39] Попова О.И., Грибоедов дипломат, Москва, 1964, 219 с.

[40] Балаян Б.П., “Фальсификация истории гибели А.С. Грибоедова в современной иранской историографии”, “Вестник общественных наук”, Ереван, 1962, □2, с. 118-129; նույնի՝ “Иранская историография о гибели А.С. Грибоедова”, “История СССР”, -Москва, 1964, □6, ноябрь, декабрь, с. 183-189; նույնի՝ “Кровь на алмазе “Шах”, Трагедия А.С. Грибоедова, Ереван, 1983, 179 с; նույնի՝ “Из дипломатической истории присоединения Восточной Армении к России”, “Известия общес¬твенных наук”, Ереван, 1962, 11, с. 19-32; նույնի՝ “Дипломатическая история русско-иранских войн и присо¬единение Восточной Армении к России”, Ереван, 1988, 279 с; նույնի՝ “Международные отношения Ирана в 1813-1828гг.”, Ереван, 1967, 296 с.

[41] Комиссаров Д.С., “Иранские авторы о гибели А.С. Грибоедова”, “Вопросы истории”, Москва, 1975, □8, с. 188-195.

հրապարակված փաստաթղթերի մի շարք ժողովածուներում[42], ընդհանուր առմամբ, ընդգրկված են նաև Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն առնչվող արդեն հայտնի փաստաթղթեր:

1980թ. Ա. Գրիբոյեդովի անձը բացարձակա¬նացնելու և միայն ի՛ր ժամանակի կրողը հանդիսացող հերոս դարձնելու հարցերի շուրջ Մ. Նեչկինայի տեսակետների քննադատությամբ հանդես է գալիս Ա. Լեբեդևը[43]:

Թեհրանում ռուսական առաքելության տապալման գործում անգլիացիների և իրանական արքունիքի առնչության հարցը պարզաբանող աղբյուրների հրապարակումով 1980-ական թթ. հանդես է գալիս Լ. Արինշտեյնը[44]:

Հետխորհրդային փուլի հրապարակումներից արժեքավոր է Ս.Ա. Ֆոմիչևի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն, որում ներկայացված են հետազոտողներ Ն. Տարխովայի, Մ. Յակուբովայի, Ե. Ցիմբալի և Ն. Մյասոեդովայի հոդվածները, որոնցում հիշյալ հեղինակները, ընկնելով ծայրահեղությունների մեջ, շատ հարցերում արտահայտում են կողմնակալ և միտումնավոր տեսակետներ[45]:

Հետխորհրդային պատմագիտական փուլում խորհրդային շրջանի որոշ տեսակետների վերանայման փորձ է Վ. Թունյանի հրապարակումը[46], որում «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ն արդեն որպես խոչընդոտ է դիտարկվում Այսրկովկասի տնտեսական զարգացման գործում:

Խորհրդային պատմագիտության տեսակետների հետևորդ և շարունակող է հետազոտող Օ. Օռլիկը[47], ում տեղեկություններն Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության շուրջ ևս կրկնում են ընդունված տեսակետները:

Անգլիական և իրանական կողմերին արդարացնելու ռուսական դիվանագիտական առաքելության ձախողման հարցում Ա. Գրիբոյեդովի թույլ տված վրիպումների վրա ուշադրություն հրավիրելու փորձ են Վ. Յարխոյի հրապարակում-

---

[42] Присоединение Восточной Армении к России, Сборник документов, Под ред. акад-ка АН Арм. ССР Ц.П. Агаяна, Ереван, 1978, т. II (1814-1830), док. □49, էջ 73-74; □171, էջ 286-295; □355, էջ 590-591; տես նաև՝ Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828гг., Сборник документов, Гл. ред-ор А.О. Арутюнян, Центральный государственный исторический архив Арм. ССР, Ереван, 1978, док. 187, с. 248-250.

[43] Лебедев А.А., Грибоедов. Факты и гипотезы, “Искусство”, Москва, 1980, с. 268-274.

[44] Аринштейн Л.М., “Новые данные об обстоятельствах гибели Грибоедова (по английским источни¬кам)”, “Рус-ская литература”, ИЛЖ, Ленинград, 1981, □2, с. 225-233; նույնի՝ “Персидские письма по поводу гибели Гри-боедова”, в книге “А.С. Грибоедов. Материалы к биографии”, Сборник научных трудов, Отв. ред-ор С.А. Фоми-чев, Ленинград, 1989, с 108-133.

[45] Проблемы творчества А.С. Грибоедова (Сборник статей), Ред-ор Фомичев С.А., Смоленск, 1994, 304с..

[46] Тунян В.Г., Грибоедов и Армения, Москва, МИ РА, Ереван, 1995, 69 с; նույնի՝ “Проекты экономического освоения Закавказье (1826-1834)”, “Вестник общественных наук”, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1989, 12(564), декабрь, с. 15-25.

[47] Орлик О.В., Россия в международных отношениях 1815-1829гг. (От Венского конгресса до Адрианопольского мира), Россия на Среднем Востоке, Москва, 1998, 266 с.; նույնի՝ “Государственные люди России первой половины XIX века: Пути и судьбы”, Инст-т Российской истории РАН, –Москва: 2000, 270 с..

ները[48]:

Հետազոտող Ի. Սուխովի հրապարակման[49] մեջ Ա. Գրիբոյեդովը ներկայացվում է գերտերություններ Անգլիայի, Ռուսաստանի և մյուս տերությունների շախմատային «մեծ խաղին» զոհաբերված զինվոր: Ուսումնասիրող Ա. Իսահակյանի հրապարակման[50] մեջ հատուկ շեշտվում է առաքելության ձախողման հարցում թուրքական գործոնի գերակայությունը և ներկայացվում է վերոհիշյալ ուսումնասիրող Ն. Մյասոեդովայի տեսակետների իրավացի քննադատությունը: Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը ներկայացնող հոդվածներով հանդես են գալիս Ս. Մարգարյանը[51] և Ա. Հաբեշյանը[52], ովքեր ևս ռուսական առաքելության տապալման գործում կարևորում են միայն քաղաքական դրդապատճառները:

Լուիզա Շենգելիան վրացական պատմագիտության պաշտոնական տեսակետներն արտահայտող ժողովածուի մեջ հրապարակած իր հոդվածում[53] Ա. Գրիբոյեդովին ներկայացնում է որպես ռուսական ցարական կառավարության և Իրանի Ղաջարների արքայատոհմի հանցավոր ծրագրերի զոհ:

Հետխորհրդային ադրբեջանական պատմագիտության պաշտոնական տեսակետների խտացված արտահայտություն են Ֆուադ Ախունդովի հրապարակումներն ու ելույթները[54], որոնցում Ա. Գրիբոյեդովի վախճանի հանգամանքներում, անապացույց կերպով, որպես մեղավոր է ներկայացնում դեսպանի «հայկական շրջապատը»:

Պատմական փաստերի և վկայությունների ներկայացմամբ՝ «հայկական կեղծիքի» ադրբեջանական գիտական ու քաղաքական շրջանակների տեսակետներին («տեղեկատվական ահաբեկչությանը») ուղղված արդարացի քննադատու-

---

[48] Ярхо Валерий, “Грибоедов и евнухи”, “Огонёк”, 2002г., □47 (4775) ноябрь 25, с. 28-31; նույնի՝ “Неудавшаяся карьера поэта и дипломата (Мог ли А.С. Грибоедов избежать гибели?)”, Электронный журнал “История”, Москва, 2005, □14, www.1september.ru.

[49] Сухов И., “Солдат “большой игры”. Тайны гибели российского посла в Персии А. Грибоедова”, интернет, http://www.centasia.ru/newsA.p.h.P?st=1235710980, 27.02.2009.

[50] Исаакян Авик, “А.С. Грибоедов и Армения”, ИФЖ, НАН РА, Ереван, 2005, □1(168), с. 141-159.

[51] Маркарян С.А., “Гибель русской миссии в Иране и убийство А.С. Грибоедова”, “Грибоедовские чтения”, ЕГЛИ им. В. Брюсова, Ереван, 2009, Выпуск I, с. 108-120.

[52] Հաբեշյան Արթուր, «Ա. Գրիբոյեդովը և ռուս-պարսկական հարաբերությունները», “Грибоедовские чтения”, ЕГЛИ им. В. Брюсова, Ереван, 2009, Выпуск I, с. 121-129.

[53] kebpf ityutkbf, uhb,jtljdbc nhfubrekb vrdktkj,f stbhfyib («Գրիբոյեդովի ողբերգական սպանությունը Թեհրանում» - Վ.Ս.), mfhsekb lbgkjvfnbf, otkboltekb, 9, bdfyt]fdf[bidbkbc cf[tkj,bc s,bkbcbc cf[tkvobaj eybdthcbntnb, mfhsekb cf[tkvobaj lf cf[fk[j lbgkjvfnbbc bcnjhbbc cfvtwybdhj rdktdbsb wtynhb, vsfdfhb htlfmnjhb, hjby vtnhtdtkb, s,bkbcb 2002, ud. 452-478 .

[54] Ахундов Фуад (Зав. сектором политических исследований администрации президента Азербайджана), интер-нет, “Российские источники раскрывают белые пятна в истории гибели А. Грибоедова”, http:// www.erevangala500.com/?direct=news.page&id=16, часть 1, 11.02.2012, часть 2, 19.02.2012, zerkalo.az; նույնի՝ “В гибели Гри-боедова повинно его армянское окружение”, http://news.day.az/politics/316216.html, 17.02.2012; նույնի՝ “Гибель Грибоедова. Кто виноват?”, www.Azcongress.ru, 5.00/5(1); նույնի՝ “Российская общественность должна знать истинные обстоятельства гибели Грибоедова”, http://news.day.az/politics/465750.html, www.interfax.az, 11.02.2014.

թյամբ հանդես են գալիս հետազոտողներ Վ. Թունյանը[55] և Արման Կարապետյանը[56]: Սակայն վերջինս էլ է հակված գերագնահատել Ա. Գրիբոյեդովի մասնակցությունն իրանահայերի ներգաղթի գործին՝ նրան համարելով այդ գործընթացի նախաձեռնող:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունն ու գիտական նորույթը, ներկայացվել է օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ», բաղկացած է երեք ենթագլխից՝ **«Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վաղ շրջանը», «Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը 1826-1828թթ. և Թուրքմենչայի պայմանագիրը», «Ա.Ս. Գրիբոյեդովի մասնակցությունն իրանահայերի ներգաղթի գործին և ռուսական դիվանագիտական առաքելության ձախողումը Թեհրանում»:**

Առաջին ենթագլխում ներկայացվում են Ա. Գրիբոյեդովի՝ դիվանագիտական ծառայության անցնելու հանգամանքները, 1819-1821թթ. Իրանում անցկացրած տարիները: Հատուկ ուշադրություն է դարձվում Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն առնչվող երկու կարևոր՝ ռուս ռազմագերիներին և դասալիքներին հայրենիք վերադարձնելու և 1821-1823թթ. իրանա-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուսական դեսպանական առաքելության վարքագծի հարցերին: Ներկայացվում է նաև միջազգային իրադրությունը XIX դարի առաջին երկու տասնամյակներին և ընթացքում ռուս-անգլո-իրանա-թուրքական հարաբերությունները: Այս ենթագլխում անդրադարձ է կատարվում Կովկասում և Իրանում Ա. Գրիբոյեդովի գրական-մշակութային գործունեությանը և դրա վրա արևելյան միջավայրի ու դեկաբրիստական շարժման ազդեցության չափի հարցերին և կովկասյան ժողովուրդների հանդեպ նրա վերաբերմունքի խնդիրներին:

Երկրորդ ենթագլխում շարունակվում է անդրադարձը միջազգային իրադրությանն ու միջպետական հարաբերություններին և 1826-1828թթ. ռուս-իրանական երկրորդ պատերազմի պատճառներին: Ներկայացվում է դեկաբրիստների ապստամբության գործով ձերբակալվելուց և արդարացվելուց հետո Ա. Գրիբոյեդովի՝ Այսրկովկաս ժամանումը և ակամա հայտնվելն իր բարերարներ Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի բարդ փոխհարաբերությունների հորձանուտում: Հանգամանորեն ներկայացվում է Ա. Գրիբոյեդովի ակտիվ մասնակցությունը ռազմական գործողություններին զուգընթաց տարվող դիվանագիտական գործընթացներին, Կարա-

[55] Тунян В.., “Гибель А.С. Грибоедова”, Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 203-217:

[56] Карапетян Арман, “Баку цинично пытается сделать дивиденты на Грибоедове”, интернет, www.yerkramas.org.

զիադինի, Դեհկարխանի և Թուրքմենչայի բանակցություններին: Վերլուծության են ենթարկվում և վերագնահատվում Թուրքմենչայի պայմանագրի կազմման, դրանում հայանպաստ հոդվածները ներառելու և այդ պայմանագրի կնքման գործում Ա. Գրիբոյեդովի առնչություններին վերաբերող հարցերը:

Երրորդ ենթագլխում ներկայացվում են Թուրքմենչայի պայմանագիրն Ա. Գրիբոյեդովի կողմից Պետերբուրգ հասցնելուց և պարգևների արժանանալուց հետո Իրանում վերջինիս՝ որպես լիազոր նախարար-դեսպան նշանակվելու հանգամանքները, Ռուսական կայսրությունից հայ ժողովրդի ունեցած ակնկալիքները և ռուսական պետության գաղութային շահերից բխող ձեռնարկումները: Սույն ենթագլխում վերլուծության են ենթարկվում նաև ներգաղթն իրականացրած հայ գործիչների հանդեպ Ի. Պասկևիչի և Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի, իրանահայերի ներգաղթի գործին վերջինիս առնչությունների հարցերը, քննարկվում է նրա գործունեությունն Իրանում որպես Ռուսաստանի լիազոր դեսպան: Տարաբնույթ աղբյուրների և վկայությունների համադրական վերլուծությամբ ներկայացվում են Թեհրանում ռուսական դիվանագիտական առաքելության ձախողման և Ա. Գրիբոյեդովի ողբերգական մահվան հանգամանքները՝ կարևորելով նաև բավարար ուշադրության չարժանացած հայկական աղբյուրները և վկայությունները:

Երկրորդ գլուխը՝ «Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԸ ԵՎ «ՌՈՒՍԱԿԱՆ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ»-Ը», բաղկացած է երկու ենթագլխից՝ «Ռուսական կայսրության ազգային-գաղութային տնտեսական քաղաքականությունն Այսրկովկասում» և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը:

Առաջին ենթագլխում քննարկվում է Այսրկովկասի նորանվաճ տարածքներում Ռուսաստանի վարած տնտեսական գաղութային քաղաքականությունը, որը և՛ Ա. Երմոլովի և՛ Ի. Պասկևիչի օրոք առաջնահերթ միտված էր ներդրած ջանքերի ու ծախսերի փոխհատուցմանը և շահութաբերության ապահովմանը: Հանգամանորեն ներկայացվում են 1822-1823թթ. Ա. Գրիբոյեդովի առնչություններն Ա. Երմոլովի տնտեսական ձեռնարկումներին և իր ընկերներ Ա. Վսեվոլոժսկու ու ֆրանսիացի Թ. Էթյեյի հետ 1823թ. մշակած, բայց միջոցների սղության պատճառով չիրագործված՝ Իրանի հետ ապրանքափոխանակության առևտրական նախագծին: Վերլուծվում են Այսրկովկասում ծառայելու ընթացքում Ա. Գրիբոյեդովին վերագրվող՝ Թիֆլիսում առևտրային բանկի, Քասթելլոյի կողմից մետաքսագործական ֆաբրիկայի և Էրիսթովի ապակու գործարանի հիմնադրմանը մասնակցելու, ինչպես նաև Այսրկովկասում տեղեկագրական, ազգագրական, ֆինանսական մանրամասն ուսումնասիրությունների նպատակով Ռուսաստանից մասնագետների գործուղմանը նպատակաուղղված ջանքերի վերաբերյալ հարցերը:

Երկրորդ ենթագլխում փորձ է արվում «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի»՝ մեզ հասած մասերի և դրա «Կանոնադրության» շուրջ արված մեկնաբանությունների քննությամբ ներկայացնել Այսրկովկասի տնտեսական զարգացմանը վերաբերող՝ Ի. Պասկևիչի մտադրությունները և այլոց տնտեսական նախագծերն ու առաջարկները: Հանգամանորեն քննարկվում են նաև վերոհիշյալ «Նախագծի» ստեղծման տեղի ու ժամանակի, դրանում Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու կատարած դերի մասնակցության չափի հարցերը: «Նախագծի»

բացակայող մասերի շուրջ Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցների, հատկապես Մ. Ժուկովսկու քննադատական դիտողությունների վերաարժեքորմամբ հատկապես կարևորվում է այդ փաստաթղթի հայտնի դրույթների՝ տնտեսագիտական և իրավաբանական տեսանկյուններից վերլուծության անհրաժեշտությունը: Սույն ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև անգլիական «Արևելա-հնդկական» և «Ռուս-ամերիկյան» հայտնի ընկերությունների հետ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» համեմատականներին: Ելնելով վերջինիս որոշ դրույթներից և Ա. Գրիբոյեդովի գրական գործերի վերլուծություններից՝ պարզաբանվում է նաև նրա վերաբերմունքը ճորտատիրական կարգերի հանդեպ, անդրադարձ է կատարվում «Նախագծի» մերժման պատճառներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

- XIX դարի ռուս գրականության իրապաշտական թատերգության հիմնադիրներից Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության հետ կապված բոլոր հանգուցային հարցերը ճիշտ է գնահատել հայտնի պատճառների կամ հանգամանքների հավաքական ամբողջության մեջ:
- Ա. Երմոլովի ազդեցության տակ, դիվանագիտական ծառայության վաղ փուլում (1818-1821թթ.) Ա. Գրիբոյեդովի դրսևորած պահվածքը նրան արժանացրել է արտաքին գործերի նախարարության դժգոհություններին և դիտողություններին: Արդյունքում Ա. Գրիբոյեդովը հեռացվել է ռուսական դեսպանական առաքելության կազմից:
- Ի. Պասկևիչի մոտ ծառայության մեջ մնալը եղել է հարկադրական քայլ, ինչը պայմանավորված է եղել ազատության մեջ գտնվելու համար գեներալին պարտական լինելու, ընտանիքի ֆինանսական քայքայված դրությունը բարելավելու, ծառայության մեջ բարձունքների հասնելու ձգտման և, ի վերջո, Ի. Պասկևիչի կնոջ զարմիկը լինելու հանգամանքներով: Այն պնդումները, թե Ի. Պասկևիչը 1826-1828թթ., իբր, գտնվել է Ա. Գրիբոյեդովի գաղափարական ազդեցության տակ՝ փաստերով քննություն չեն բռնում:
- Ա. Գրիբոյեդովի գրական-մշակութային գործունեությունը սերտորեն կապված է Այսրկովկասում անցկացրած տարիների հետ: Հիմնավորված չեն այն պնդումները, թե նրա «Խելքից պատուհաս» կատակերգությունը, մի քանի հայտնի բանաստեղծություններ և մեզ չհասած ողբերգությունների նախագծերը ստեղծվել են դեկաբրիստական գաղափարների ազդեցության տակ և, որ իր ստեղծագործությունների միջոցով նա իբր փորձել է քարոզել նրանց ծրագրային դրույթները: Իրականությունն այն է, որ մտերիմ լինելով դեկաբրիստներից ոմանց հետ և, ամենայն հավանականությամբ, ծանոթ լինելով նրանց ծրագրերին՝ Ա. Գրիբոյեդովը չի ընդունել նրանց խռովարարական մարտավարությունը և չի դարձել նրանցից մեկը:
- Գերագնահատվել է Ա. Գրիբոյեդովի դերը 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում: Այդ պայմանագրի տեքստը կազմվել է ռուսական կառավարության նախօրոք մշակած հրահանգներով, ինչը թույլ է տալիս պնդել, որ բոլոր, այդ թվում՝ հայանպաստ հոդվածները պայմանագիր են մտել ոչ թե Ա. Գրիբոյեդովի ջանքերով, այլ՝ ռուսական գաղութային քաղաքականության նպատակները կառավարական հրահանգներով Այսրկովկասում իրականացնող Ի. Պասկևիչի ցուցում-

ների, հայ գործիչների խնդրանքների և առաջարկների ու ռուսական դիվանագիտական աշխատակազմի միահամուռ ջանքերի, ինչպես նաև Ա. Գրիբոյեդովի կողմից դրանք գրագետ ձևակերպելու արդյունքում:

• Ա. Գրիբոյեդովի՝ Իրանում որպես Ռուսաստանի լիազոր դեսպան նշանակումն իբրև քաղաքական աքսորի և հավանական մահվան գիրկն ուղարկելու դիտավորություն տեսնելու վերաբերյալ տեսակետները փաստերով չեն ապացուցվում:

• Գերագնահատվել է Ա. Գրիբոյեդովի դերն իրանահայերի՝ դեպի Արևելյան Հայաստան ներգաղթի գործում: Չլինելով Ներգաղթի կոմիտեի և Հայկական մարզային վարչության անդամ և ներգաղթի կազմակերպման եռուն շրջանում բացակայելով Այսրկովկասից՝ Ա. Գրիբոյեդովի բովանդակային մասնակցությունն իրանահայերի ներգաղթի մեծածավալ գործընթացին սահմանափակվել է Ի. Պասկևիչի հանձնարարությամբ Ե. Լազարյանի ղեկավարած Ներգաղթի կոմիտեի գործունեության վերստուգմամբ (ռեվիզիա) և գնահատականներով, ինչպես նաև Ռուսաստանի գաղութային շահերից բխող մի քանի առաջարկներով:

• Իրանում որպես նախարար-դեսպան՝ Ա. Գրիբոյեդովի առնչությունները ներգաղթի գործընթացին դրսևորվել են իրանահայերի թողած գույքի վերադարձման, ինչպես նաև նախկինում գերեվարված և մահմեդականների տներում պահվող անձանց որոնման, հայտնաբերման ու վերադարձի հետ կապված խնդիրներում:

• Հայերի և ընդհանրապես այլ ժողովուրդների հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը պայմանավորված է եղել ոչ թե նրանց հանդեպ տածած սիրո, կարեկցանքի կամ հարգանքի հանգամանքներով, այլ նրանով, թե որքանով էին նրանք հավատարիմ ծառայում և ինչ օգուտ կարող էին բերել Ռուսական կայսրությանը: Դիվանագիտական ծառայության ընթացքում, Ա. Գրիբոյեդովի համար առաջնային են եղել ռուսական կայսրության գաղութային շահերը: Նրա մեծապետական պահվածքի դրսևորումները, այս դեպքում ևս թելադրված էին ռուսական կայսրապետական քաղաքականության շահերից:

• Ճիշտ չէ թեհրանյան դեպքերը վերագրել անգլիական իշխանությունների մասնակցությանը: Վերջիններս թեև շահագրգռված էին Ռուսաստանի դեմ թուրք-իրանական համատեղ դաշինքի ստեղծման և գործակցության հարցում, որի նպատակն էր՝ հնարավորինս նվազագույնի հասցնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը, սակայն ռուս-իրանական երկրորդ պատերազմում Իրանի պարտությունից հետո, նոր պատերազմ վարելու վերջինիս անկարողությունը, հակաղաջարական տրամադրությունների ուժգնացումը և գահակալական կռիվների վտանգը, ինչպես նաև 1828 թվականից ընթացող ռուս-թուրքական պատերազմում թուրքերի պարտություններն ու տարածքների կորուստն անգլիական իշխանություններին վստահություն չեն ներշնչել՝ իրենց նպատակին հասնելու ռուսական դեսպանակազմը կոտորածի ենթարկելու ճանապարհով:

• Զբաղեցնելով նախարար-դեսպանի պաշտոն՝ Ա. Գրիբոյեդովը դրսևորել է ոչ թե դիվանագետին, այլ, ավելի շուտ, գրողին և մշակութային գործչին հարիր զգացմունքային, միևնույն ժամանակ համառ, անզիջում և սեփական դիրքն ու արժանապատվությունը չափից դուրս կարևորող և ընդգծող պահվածք:

• Ա. Գրիբոյեդովն իր ենթակաների անվայելուչ գործողությունները չի կարո-

ղացել վերահսկել ու կանխել: Այս ամենը և Ա. Գրիբոյեդովի վարած «հարեմային դիվանագիտությունը» նրա դեմ են տրամադրել և՛ իրանական ժողովրդի մոլեռանդ ու իրենց թշվառ վիճակի հարցում ռուսներին մեղադրող հատվածին, և՛ տարածքային կորուստներից ու ռազմատուգանքի ծանրությունից գազազած իշխող վերնախավին, և՛ հետադիմական հոգևորականությանը, ինչից էլ օգտվել են հակառուսական տրամադրություններ ունեցող իրանական և անգլիական խմբավորումները:

• Ռուսական դեսպանակազմի սպանդը չի մտել անգլիական և իրանական խմբավորումների ծրագրերի մեջ, քանի որ նրանք չէին կարող չգիտակցել ամենի բացասական և ճակատագրական հնարավոր հետևանքներն իրենց երկրների համար:

• Թեհրանում ռուսական դիվանագիտական առաքելության ձախողման պատճառների վերաբերյալ իրանական և ռուսական կողմերի վկայություններում ու պաշտոնական տեսակետներում «հայկական գործոնի» շուրջ տեղ գտած ակնարկները հիմնավոր փաստարկված չեն և երկուստեք թույլ տված սխալներն ու վրիպումները քողարկելու կամ արդարացնելու քաղաքական նպատակներ են հետապնդել: Մինչխորհրդային շրջանում, մասամբ ընդունելով Ա. Գրիբոյեդովի և առաքելության որոշ անդամների մեղքը, արդարացվել է կատարվածի շուրջ ռուսական կառավարության վերաբերմունքը՝ դա պատճառաբանելով թուրքերի դեմ պատերազմի իրավիճակում ռուս-իրանական նոր պատերազմը կանխելու անհրաժեշտությամբ, իսկ խորհրդային ժամանակաշրջանում նպատակ է դրվել արդարացնել Ա. Գրիբոյեդովին, նրան ներկայացնել որպես անթերի դիվանագետ, ով մտահոգված և զբաղված է եղել այսրկովկասցի, հա՛տկապես հայ գերեվարվածների և իրանահայ գաղթականների խնդիրներով և ով զոհ է գնացել ռուսական կայսրության գաղութային շահերին:

• «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախաձի» գաղափարն ու ստեղծումը ճիշտ չէ վերագրել բացառապես Ա. Գրիբոյեդովին կամ Պ. Զավիլեյսկուն, այլ հարկ է «Նախագիծ»-ը դիտարկել որպես մի աշխատանք, որը կատարվել է Այսրկովկասի տնտեսական նվաճմանը միտված՝ իշխանությունների նպատակների, Ի. Պասկևիչի բանավոր ցուցումների, Ռուսաստանից գործուղված տնտեսագետների և այլ մասնագետների կողմից տարածաշրջանում կատարած համակողմանի հետազոտությունների տվյալների ու դրանց հիման վրա՝ Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ «Նախագծի» ստեղծման գործում ներգրավված Պ. Զավիլեյսկու կողմից տնտեսագիտական չափանիշներին համապատասխան ձևակերպելու, ապա Ա. Գրիբոյեդովի կողմից գրագետ կազմելու և խմբագրելու արդյունքում:

• Ճիշտ չէ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը ներկայացնել որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական և ապրանքադրամական հայացքների դրսևորում: Ապրանքադրամական և ազատ շուկայական հարաբերություններին բնորոշ տնտեսագիտական և ընդհանրապես իրավաբանական տեսանկյուններից կարևոր շատ հարցեր բացակայում են «Նախագծում»:

• Տնտեսական ոլորտին առնչվող կայսերական հրամանագրերի հետ «Նախագծի» ունեցած հակասությունները, Այսրկովկասի իշխանությունների ազդեցության և դիրքերի թուլացման վտանգը, երկրամասում Ի. Պասկևիչին երկրորդական

դերի հատկացման հանգամանքը, «Նախագծի» հակաանգլիական ուղղվածությունը և, ի վերջո, դրա ուտոպիական բնույթը հանգեցրել են «Նախագծի» մերժմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ա.Ս. Գրիբոյեդովի մասնակցության հարցը խորհրդային պատմագրության գնահատմամբ, ՊԲՀ, Երևան, 2005, 3(170), էջ 103-110:
2. Ա.Ս. Գրիբոյեդովի հարաբերությունները Ա.Պ. Երմոլովի և Ի.Ֆ. Պասկևիչի հետ 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ՝ մինչխորհրդային ռուս պատմագրության գնահատմամբ, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2006, 1(26), էջ 209-220:
3. Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից (հակասական Ա.Ս. Գրիբոյեդովը), «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2006, 4(29), էջ 182-192:
4. 1828թ. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» գնահատման շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2007, 2(619), մայիս-օգոստոս, էջ 112-121:
5. Ա.Ս. Գրիբոյեդովի տնտեսագիտական գործունեության որոշ հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2008, 3(623), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 35-48:
6. Մասոնություն-դեկաբրիստներ առնչությունների հարցի շուրջ, «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, 3(56), էջ 132-151:
7. Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական առաքելության կործանումը Թեհրանում, ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2(641), «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 88-100:

СИМОНЯН ВАГРАМ РУБЕНОВИЧ

ДЕЯТЕЛЬНОСТЬ А.С. ГРИБОЕДОВА В ЗАКАВКАЗЬЕ

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.
Защита состоится 19-го октября 2015г. в 14:00, на заседании специализированного совета 006 “Всемирная история”, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, 0019, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена деятельности А.С. Грибоедова в 1818-1829гг. в Закавказье.

В контексте армяно-русских отношений и внешней политики России в первой трети XIX века важное научное значение имеет изучение дипломатической, экономической и культурной деятельности талантливого русского писателя и одного из основателей русской реалистической драматургии А.С. Грибоедова, так как происходящие на этом этапе события, в которых определённую роль сыграл Грибоедов, имели переломное значение в судьбе и жизни армянского народа.

Согласно Туркменчайскому договору, заключённому после второй русско-иранской войны 1826-1828гг., Восточная Армения была присоединена к Российской империи, и произошла репатриация иранских армян, что в пользу армян сильно изменило демографическую картину в регионе и позволило армянам объединится на исторической родине.

Будучи служащим дипломатического корпуса русской кавказской армии, а потом послом-министром в Иране, А. Грибоедов имел определённое участие в деле подписания Туркменчайского договора и осуществления репатриации иранских армян, а также был вовлечён в процесс экономического присвоения Закавказья российскими властями.

Цели работы:

- Исследовать и прояснить поведение А. Грибоедова на раннем этапе дипломатической деятельности, причины его ухода с дипломатической службы и отношения к завоённым народам Кавказа.
- Осветить и переосмыслить взаимоотношения А. Грибоедова с генералами А. Ермоловын и И. Паскевичем, а также его деятельность от переговоров в Каразиадине до подписания мирного договора в Туркменчае.
- Проанализировать усилия русских властей и вклад армянских деятелей в дело репатриации иранских армян, представить подленную связь А. Грибоедова с этим процессом и его отношение к армянским деятелям, осуществившим репатриацию.
- Подвергнуть анализу вопросы соавторства, причины создания, сути и отказа от принятия со стороны властей документа “Проект учреждения

Российской Закавказской компании”.

- Детально проанализировать точки зрения, возникшие по факту провала русской дипломатической миссии в Иране.

Данная диссертационная работа по своему содержанию и строению является первым всеобъемлющим исследованием в армянской историографии, где делается попытка всесторонне и во взаимосвязи с целостностью изучить противоречивое проявление мировозрения А. Грибоедова, его дипломатическую, культурную деятельность и экономическую заинтересованность.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованных источников и литературы.

Во ВВЕДЕНИИ обосновывается актуальность выбора темы исследования, определяются его цели и задачи, представляются методологическая и научная новизна работы, хронологические рамки темы, практическая значимость работы, а также даётся краткий обзор источников и литературы.

В первой главе, которая озаглавлена “Дипломатическая деятельность А.С. Грибоедова”, кратко представлена внешняя политика России в первой трети XIX века, и в этом контексте подробно обсуждаются вопросы поведения А. Грибоедова на раннем этапе дипломатической службы, его уклонения от указаний и инструкций правительства, ухода в отставку. Освещаются степень влияния восточной среды и декабристского движения на литературно-культурную деятельность А. Грибоедова на Кавказе и в Иране, а также вопросы его отношения к кавказским народам.

Скурпулёзно анализируются и переоцениваются точки зрения о его дипломатической деятельности во время русско-иранской войны 1826-1828гг., заключения в 1828г. Туркменчайского договора, включающего в себя статьи в пользу армян, его связях с процессом репатриации армян, стереотипы о политической ссылке А. Грибоедова в Иран со стороны властей, а также его деятельности в Иране в 1828-1829гг. как полномочного посла и обстоятельств трагической гибели в Тегеране. В этой главе анализируется также степень виновности и участия в тегеранской трагедии английских, иранских и турецких сторон.

Во второй главе диссертации - “А.С. Грибоедов и “Проект учреждения Российской Закавказской компании””, сделана попытка представить факторы влияния на экономические интересы А. Грибоедова также в свете колониальной экономической политики России в Закавказье, подробно проанализирован написанный А. Грибоедовым в соавторстве с П. Завилейским “Проект учреждения Российской Закавказской компании” и, кроме ныне известного историко-политического анализа, детально указана необходимость изначально отсутствующего юридического и экономического анализа данного “Проекта”.

В этой главе также анализируются и переоцениваются сложившиеся мнения о “возможной предпринятой попытке компромисса” А. Грибоедова в данном “Проекте” между монархией и буржуазией, капиталистическим и крепостническим отношениями.

В заключении обобщены основные результаты работы. Дана новая оценка деятельности А. Грибоедова, выделены те основные стереотипы, которые, по средствам обобщения фактов и данных, рассмотрены в диссертации. В частности, нами указана и обоснована несостоятельность попыток переоценивания и

тенденциозного политизирования личности поэта А. Грибоедова во всех сферах его деятельности.

VAHRAM R. SIMONYAN

A.S. GRIBOYEDOV'S ACTIVITY IN TRANSCAUCASIA

The defense of the dissertation will take place at 14:00, on October 19th of 2015, at the meeting of the Specialized Council 006 "World History" acting at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The dissertation is devoted to the activities of A.S. Griboyedov in Transcaucasia in 1818-1829.

The relationship of the Armenian, Russian and in the first thirty years of XIX century in the foreign policy led by Russia a talented Russian writer and from the main issue of Russian realistic dramaturgy a scientific essential significance has the research of A. Griboyedov's diplomatic, economic and cultural activity, as the events taking place in that period where A. Griboyedov had some participation, had turning importance in the life of Armenian nation.

After the Second War signed by Treat of Turkmenchay Eastern Armenia was connected to Russian Empire, an immigration of Iran-Armenians was organized, which in favour of Armenians, changed the demographic picture of the region and gave an opportunity to Armenians to unite in their own motherland. Being an officer of diplomatic corps in Russian Caucasian Army then a minister-ambassador in Iran, A. Griboyedov had certain role in signing a Treaty of Turkmenchay and in the realization of the process of Iran-Armenian immigration, as well as was drawn into the economic adoption process of Tranfcaucasia by Russian powers.

The aims of the work are:

- To study A. Griboyedov's attitude of diplomatic activity in the early period and the circumstances why he retired from the diplomatic service.
- To illustrate A. Griboyedov's interrelation with A. Yermolov and I. Paskyevich and his activity from Karaziadin to Turkmenchay.
- Analyzing the expended efforts of Russian powers and Armenian figures connected with the immigration of Iran-Armenians, to present A. Griboyedov's role and his attitude towards the Armenian figures who implemented the immigration.
- To investigate the attitude of A. Griboyedov's questions towards the creation, essence, the reason of refusal, selfdom, capitalist relations of "The project of Foundation of Russian-Transcaucasian Company" document.
- To analyze thoroughly the viewpoints created around the circumstances of the destruction of Russian diplomatic mission in Iran.

- To explain A. Griboyedov’s looks, his literature-cultural activity and relation with Armenian figures in Transcaucasia.

This dissertation with its contents and structure is the first comprehensive research in Armenian historiography where it is tried to study thoroughly the contradictory manifestation of A. Griboyedov’s attitude, diplomatic, cultural activity and economic interests.

The dissertation consists of introduction, two chapters, conclusion, used sources and literature list.

In the INTRODUCTION it is spoken about the contemporaneousness, aims and issues of the dissertation subject, is presented the methodological base of the work and scientific essence, the borders of chronological work, is based the applied significance of the work, is given the sources and literary theory.

In the first chapter which is titled “A.S. GRIBOYEDOV’S DIPLOMATIC ACTIVITY”, the Russian’s foreign policy is briefly presented in the first thirty years of XIX century and in that context the questions of A. Griboyedov’s attitude, the deviation from the governmental instructions and indications, the military service leaving are analyzed in detail in the early period of diplomatic activity, the issues of the influence of the Eastern atmosphere and Decembrist movement on A. Griboyedov’s literature-cultural activity, as well as his attitude towards the Caucasian nation are valued. His diplomatic activity during the Russian-Iran war in 1826-1829, the conclusion of the Treaty of Turkmenchay, including articles that promoted Armenians and his role issues in the immigratin Iran-Armenians, as well as in Iran in 1828-11829, as an Ambassador Plenipotentiary, the circumstances of his activity and diplomatic death are given a new interpretation.

The second chapter of the dissertation is titled “A.S. GRIBOYEDOV AND THE PROJECT OF FOUNDATION OF RUSSIAN-TRANSCAUCASIAN COMPANY”. It was tried to introduce the factors influenced upon A. Griboyedov’s economic interests under the light of economic policy led by Russia in Transcaucasia, was analyzed the above mentioned “Project” authorized by A. Griboyedov and P.D. Zavileyski, pointing out, apart from historical policy, the necessity of submitting to legal and economic serious analysis. We also touched upon the issues of A. Griboyedov’s attitude towards the selfdom.

In the CONCLUSION the main results of the thesis are summarised. A. Griboyedov's activity is newly estimated, the main stereotypes are separated which are reviewed and overestimated in the thesis through the comparison of the details and facts. Particularly we have mentioned and stated the activity of A. Griboyedov writer in all spheres, his person's overestimation and the attempts of deliberate politics being unsubstantinted.